ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 610-Ա

«16» հուլիսի 2024 թվական ք. Մարալիկ

<<ԿԻՐ-ՔԱՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նշել, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյանի և <<ԿԻՐ-ՔԱՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Լ. Ղազարյանի միջև կնքված Անիի համայնքապետարանի կարիքների համար աշխատանքների կատարման 2022 թվականի օգոստոսի 12-ի N ՇՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/02 պայմանագրի /հետագայում՝ Պայմանագիր/ 1.3.-րդ կետի համաձայն, Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանված 120 աշխատանքային օր /12.12.2022թ/:

Սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրով նախատեսված աշխատանքները չեն ավարտվել և Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունման ակտ չի կազմվել:

Կապալառու կազմակերպության կողմից չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի>> VII գլխի պահանջները և Պայմանագրի 8.8.-րդ կետով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի երկարացման պայմանները:

Այսինքն՝ Ընկերությունը կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154[1]-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1]–րդ հոդվածի 3-րդ մասի, 281-283-րդ հոդվածների, 305-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից կատարված

ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմված 2023 թվականի նոյեմբերի 17-ի <<<<Շինաշխարհ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Վարչական իրավախախտում թույլ տալու վերաբերյալ>> արձանագրությունը, կապալի պայմանագրի 5.1.-րդ կետը և հաշվի առնելով ընկերության տնօրենի 2024 թվականի հուլիսի 16-ի բացատրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԿԻՐ-ՔԱՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ /գործադիր տնօրեն Լ. Ղազարյան/ նշանակել **1 976 736 /մեկ միլիոն ինը հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր երեսունվեց/** Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք՝ Պայմանագրի 5.1-րդ կետով նախատեսված ընդհանուր գնի նկատմամբ 1 /մեկ/ տոկոսի կիրառմամբ/, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի **900495101124** հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:

2. Սույն որոշումը երեք օրվա ընթացքում ուղարկել Ընկերության գործադիր տնօրեն՝ Լ. Ղազարյանին /Հասցե՝ մարզ Շիրակ, գ. Ախուրյան Զ. Անդրանիկի փ. տ 6, ՀՎՀՀ 00068694 <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Գյումրու մ/ճ, ՀՀ 2050122205831002, հեռ. 098 565858/:

3 Որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերության տնօրիությանը սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«16» հուլիսի 2024 թվական
քաղաք Մարալիկ